Ներառական կրթության պարագայում կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի խնամքից կամ իր երեխայի հետ միջավայրի շփումից, քանի որ նույն միջավայրը հանդուրժողականությամբ է վերաբերում իր երեխային՝ ընդունելով վերջինիս հավասար լինելու փաստը: Ընտանիքի հետ տարվող մասնագիտացված աջակցության ծառայությունները և միջավայրի վերաբերմունքը օգնում են ծնողին ավելի օգտակար լինել իր երեխային, դուրս գալ անելանելիության վիճակից ու ամորթի բարդությից և օգնել իր երեխային հաղթահարելու անհատական ուսուցման պլանը:

Ներառական կրթության պարագայում, պետությունը աստիճանաբար իրականացնում է սոցիալական հավասարության ապահովման խնդրում իր դերակատարումը՝ նվազեցնում է հասարակության շերտավորումը ու նպաստում նրա հոգեբանական առողջացմանը, հասնում է բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային բաշխմանը, քանի որ հատկացումները կատարվում են ավելի մեծ թվով երեխաների կրթությունը կազմակերպելու համար:

Երեխաների շրջանում իրավահավասարության ապահովումը հանգեցնում է ստեղծագործական հնարավորություններով ու ինքնուրույն գործելու պատրաստ մարդու ձևավորմանը:

Ի վերջո ներառական կրթությունը նպաստում է երկրում կրթության կազմակերպման և իրականացման մեխանիզմների արդիականացմանը՝ համաշխարհային զարգացման ժամանակակից միտումներին և մարտահրավերներին համահունչ:

Ասպիսով, ներառական կրթությունը, ենթադրում է հաստատություններում այնպիսի կրթական միջավայրի և պայմանների ստեղծում, որոնցում բոլոր երեխաները, անկախ իրենց առանձնահատուկ կրթական կարիքներից, ունեն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ: Նման միջավայրը պետք է լինի երեխաներին ներառող, կրթություն ստանալու համար արդյունավետ, երեխաների նկատմամբ բարյացկամ, երեխաների առողջության համար ապահով ու անվտանգ: Ներառումը ենթադրում է կրթության առավել լայն տեսլական, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ՝

- հաշմանդամություն ունեցող երեխաների.

- բռնության ենթարկվող երեխաների.
- աշխատող երեխաների.
- փախստական կամ տեղահանված երեխաների.
- միգրանտների.
- ծայրահեղ չքավորության մեջ ապրող երեխաների.
- Ազգային կամ լեզվական փոքրամասնությունների երեխաների.
- հակամարտությունների գոտիների երեխաների.
- ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի հետևանքները կրող երեխաների և այլն:

Ուսումնական հաստատությունում բոլոր երեխաների մոտ պետք է ձևավորվեն այնպիսի հմտություններ, վերաբերմունք և արժեքահամակարգ, ինչը նրանց թույլ կտա հաստատությունն ավարտելուց հետո, չափափաս կյանքում իրենց լիովին դրսևորել և ինքնաիրացվել:

Հավասարության սկզբունքը իր մեջ ներառում է նաև տարբեր սեռերի, ազգային փոքրամասնությունների, սոցիալական տարբեր կարգավիճակի ընտանիքների երեխաների հավասարությունը: Հայաստանի, ինչպես և ընդհանրապես ժողովրդավարական պետությունների օրենսդրությունները, ամրագրում են սեռերի հավասար իրավունքները, պարտականությունները և ազատությունները: Սեռերի հավասարության սկզբունքներն ամրագրված են ՀՀ մի շարք օրենքներում, ինչպես նաև ՀՀ Աշխատանքային օրենսգրքում, որտեղ նշված է, որ աշխատանքային հարաբերությունների կողմերը իրավահավասար են՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, ամուսնական վիճակից, ընտանեկան դրությունից և աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից:

Հաստատությունում ներառական կրթության և սովորողների միջև հավասարության ապահովման ինքնագնահատումն ուղղված է բացահայտելու, թե արդյոք հաստատությունն ապահովում է ակնկալվող հետևյալ արդյունքները՝

- հաստատություն ընդունվելու և հաստատությունում սովորելու համար ստեղծված են հավասար պայմաններ բոլոր երեխաների համար՝ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական խոցելիության աստիճանից անկախ.
- հաստատությունն ապահովում է բոլոր սովորողների հավասար մասնակցությունը ուսումնառության գործընթացին՝ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական խոցելիության աստիճանից անկախ.
- հաստատությունն ապահովում է բոլոր սովորողների համար կրթության արդյունքներին հասնելու և առաջադիմության ցանկալի մակարդակը՝ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական խոցելիության աստիճանից անկախ:

Հաստատությունում ներառական կրթության և հավասարության ապահովումը նկարագրող հիմնական ցուցանիշները և չափանիշները հետևյալ են՝

Հաստատությունը կարևորում է ներառական կրթությունը.

1. ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է հաստատության զարգացման ծրագրում.
2. հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներ.
3. հաստատության տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով տեղակալ/կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին.

4. հաստատության վեր կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ.
5. հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:

Հաստատության աշխատակազմը արդիականացնում է իր գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում.

6. վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապրաստումների.
7. հաստատությունն ունի ներառական կրթության ուղղությամբ վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ: Վերջին 5 տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը:

Հաստատությունն ունի բավարար ռեսուրսներ՝ աջակցելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սովորելուն և ուսումնական միջավայրը հարմարեցված է նրանց կարիքներին.

8. հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն.
9. հաստատությունն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, ուսուցչի օգնական և այլն).
10. հաստատությունում առկա են բավարար քանակի և որակի ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար.
11. հաստատությունում առկա են բավարար քանակի և որակի ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ լսողության և տեսողության ֆունկցիայի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար.
12. հաստատության դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները մեկուսացված չեն.
13. հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար.
14. հաստատության ռեսուրս-սենյակ այցելող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը և տոկոսը.
15. հաստատության ռեսուրս-սենյակ այցելող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) թիվը և տոկոսը:

Հաստատությունը տեղյակ է դասարանական և արտադասարանական աշխատանքներին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հավասար մասնակցությանը խոչընդոտող հանգամանքներից և մշակել ու իրականացնում է դրանք վերացնելու միջոցառումների պլան.

16. հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական (թեքահարթակ, հենակ և այլն) խոչընդոտները.
17. հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները:

Ուսուցիչները կարողանում են հարմարեցնել ուսումնական ծրագիրը, դասի պլանն ու ուսուցանման գործընթացը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքներին և մշտապես խրախուսում են նրանց.

18. Անհատական ուսումնական պլանները (ԱՌԴ) մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը.
19. ուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ.
20. ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր.
21. ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից.
22. ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում, և նույնիսկ սեփական վարքագծում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները հավասարապես մասնակցում են դպրոցի և դասի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի.

23. հաստատության այն սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք.
24. հաստատությունից հեռացած/ուսումն անավարտ թողած կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը և տոկոսը.
25. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների բացակայությունների միջին թիվը, ժամ/սովորող.
26. արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը և տոկոսը.
27. հաստատության աշակերտական խորհրդում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը:

Հաստատության սովորողները գիտակցում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող իրենց ընկերների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման անհրաժեշտությունը և օգնում են փոխել դրանք.

28. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունների թիվը և ձևերը.
29. հաստատության կայքում և/կամ աշակերտական թերթում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութերի, հոդվածների, ֆոտոնկարների, և այլ հրապարակումների թիվը:

Հաստատությունում ապահովված է սեռերի, և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունը.

30. սեռերի հավասարության գործակիցը՝ հաստատությունում սովորող տղաների թվի հարաբերությունը աղջիկների թվին.
31. Աշակերտական խորհրդում սեռերի հավասարության գործակիցը՝ խորհրդի անդամ աղջիկների թվի հարաբերությունը տղաների թվին.
32. գերազանց առաջադիմությամբ տղաների թվի հարաբերությունը գերազանց առաջադիմությամբ աղջիկների թվին.
33. տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող տղաների թվի հարաբերությունը տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող աղջիկների թվին.
34. տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունը աղջիկների տարեկան միջին բացակայությունների թվին (ժամերով).
35. «մաթեմատիկա», «ֆիզիկա», «քիմիա» և «կենսաբանություն» առարկաներից տղաների և աղջիկների միջին առաջադիմությունը.
36. հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը.
37. աշակերտական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը.
38. հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների միջին տարեկան առաջադիմությունը/գնահատականները.
39. անվճար դասագրքեր ստացող սովորողների թիվը և տոկոսը.
40. անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը.
41. սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը և դրանց թիվը.
42. հաստատության կողմից իրականացված ներառական կրթությանն առնչվող արտադասարանական միջոցառումների թիվը՝ ըստ դասարանների (գրույցներ, ֆիլմերի դիտում, քննարկումներ. կլոր-սեղաններ, սեմինարներ, էքսկուրսիաներ և այլն):

Ներառական կրթության և հավասարության ապահովումը նկարագրող հիմնական ցուցանիշներին և չափանիշներին հաստատության համապատասխանությունը գնահատելու ձևերը ներառում են և՛ փաստաթղթային ուսումնասիրություն, և՛ դիտարկում-փաստագրում, և՛ հարցումների իրականացում:

Մաս 4-ում բերված չափանիշներ 1-ից 13-ի, 16-ից 18-ի և 20-ից 22-ի և 41-ի համար անհրաժեշտ է կատարել փաստաթղթային ուսումնասիրություն և դիտարկում-փաստագրում կամ հարցումներ և դրանք իրականացնելուց հետո լրացնել ստորև Աղյուսակ 26-ը:

Աղյուսակ 25. Հաստատությունում ներառական կրթության իրականացմանը վերաբերվող չափանիշներ

Չափանիշ	Այո	Ոչ	Մեկնաբանություն
Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է հաստատության զարգացման ծրագրում	այո		ՀՀ ԿԳ նախարարի 2007թ մայիսի 11—ի <<Ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկը հաստատելու մասին>> N428 Ա/Ք հրամանի հավելվածի նոր 131 կետը:
Հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան	Այո		

միջոցառումներ, այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներ			
Հաստատության տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով տեղակալ/կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին	Այո		Հետևում է հաճախումներին, սննդի բաշխմանը, բազմամասնագիտական խմբի կողմից աշխատանքների կազմակերպմանը
Հաստատության վեբ կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ	Այո		
Հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:	Այո		Դասղեկների հանդիպման ժամերին և ծնողական ժողովներին անցկացվում են զրույցներ՝ նվիրված երեխաների հավասար իրավունքներին և հանդուրժողականությանը:
Վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապատրաստման	Այո		Երեխաների բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն
Հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ: Վերջին 5 տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը	Այո		30
Հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) ապահովված է տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիություն	Այո		Ունենք թեքահարթակներ. ապահովված է տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ֆիզիկական մատչելիություն / բայց ոչ բոլոր հարկերում/
Հաստատությունն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, ուսուցչի օգնական և այլն)	Այո		Բազմամասնագիտական խմբում աշխատում են՝ սոցմանկավարժ, հոգեբան, ուսուցչի օգնական
Հաստատությունում առկա են բավարար քանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար	Այո		Սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների համար կարիներտները ապահովված են անհրաժեշտ գույքով /2021թ ստացված <<Կարիտասից>>, մարզաասարքով, ուսումնամեթոդական նյութերով:
Հաստատությունում առկա են բավարար քանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր լսողության և տեսողության ֆունկցիայի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար		ՈՉ	

Դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները մեկուսացված չեն	Այո		ԿԱՊԿՈՒ սովորողների ուսուցման համար հատկացված դասասենյակները գտնվում են առաջին հարկում, մեկուսացված չեն, մյուս դասասենյակների կողքին են:
Հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար	Այո		Ֆիզիկական վիճակը նորմալ է, վերանորոգված է, ապահովված է անհրաժեշտ գույքով
Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական (թեքահարթակ, հենակ և այլն) խոչընդոտները	Այո		Կա թեքահարթակ
Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները	Այո		Կատարվել է հարցում պարզելու, թե արդյոք հաստատությունում հազթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները: Հարցման մեջ ներառել են ուսուցիչներին, սովորողներին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին, ծնողներին, և վարչական կազմը: Հարցվողների 80% -ը կարծիք են հայտնել, որ դպրոցում արդյունավետ կերպով է կազմակերպվում ներառական կրթության մեջ ընդգրկված աշակերտների հետ աշխատանքը:
Անհատական ուսումնական պլանները (ԱՌԻՊ) մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը	Այո		(ԱՌԻՊ) մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը
Ուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ	Այո		Բոլոր ուսուցիչները
Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր	Այո		(Ուսուցիչների դիրքորոշումը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հարցումներ ուսուցիչների, սովորողների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, ծնողների և վարչական կազմի շրջանում:)
Ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց	Այո		Հարցվողների 90% -ը հաստատում են, որ ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած

առանձնահատուկ կարիքներից			տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից
Ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ, երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում, և նույնիսկ սեփական վարքագծում	Այո		
Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը	Այո		<i>Տրամադրել անվճար դասագրքեր, օգնել հագուստով, երեխաների ընտանիքների մասին սոցիալական վիճակի մասին իրազեկել մարզային ու համայնքային մարմիններին:</i>

Մաս 4-ում բերված ցուցանիշներ 14, 15, 19, և 23-ից 42-ի համար անհրաժեշտ է կատարել փաստաթղթային ուսումնասիրություն և փաստագրում, այնուհետ լրացնել ստորև Աղյուսակ 27-ը:

Աղյուսակ 26. Տվյալներ հաստատությունում ներառական կրթության իրականացման և հավասարության ապահովման խնդիրների վերաբերյալ

Ցուցանիշ	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
Ռեսուրս-սենյակ այցելող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը (ԿԱՊԿ) և տոկոսը (Հաշվարկ. ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտմամբ)	73 100%	51 100%	50 100%
Ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) թիվը և տոկոսը (Հաշվարկ. ռեսուրս-սենյակ այցելող ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների (խնամակալների) ընդհանուր թվին՝տոկոսային արտահայտմամբ)	53 72%	35 68%	40 80%
Հաստատության այն սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (Հաշվարկ. ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը սովորողների	91	103	101

ընդհանուր թվին՝տոկոսային արտահայտմամբ; սովորողների թիվը և տոկոսը հաշվարկել ըստ հաշմանդամության և կարիքների տիպերի)			
Հաստատությունից դուրս եկած (ուսումն անավարտ թողած) ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը (Հաշվարկ. հաստատությունից հեռացած/ուսումն անավարտ թողած ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվին՝տոկոսային արտահայտմամբ)	5	4	9
ԿԱՊԿ ունեցող սովորողների բացակայությունների միջին թիվը (Ժամ/սովորող) (Հաշվարկ. ԿԱՊԿ ունեցող սովորողների բացակայությունների տարեկան ընդհանուր թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվին)			
Արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող ԿԱՊԿ սովորողների թիվը և տոկոսը (Հաշվարկ. արտադասարանական աշխատանքների խմբակներում ներառվող և աշխատանքներին մասնակցող ԿԱՊԿ ունեցող սովորողների թվի հարաբերությունը ԿԱՊԿ ունեցող սովորողների ընդհանուր թվին՝տոկոսային արտահայտմամբ)	73 100%	100%	100%
Դպրոցի աշակերտական խորհրդում ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը	4	4	6
ԿԱՊԿ կարիք ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունների թիվը և ձևերը			
Հաստատության վեբ կայքում և/կամ աշակերտական թերթում ԿԱՊԿ ունեցող անձաց կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութերի, հոդվածների, ֆոտոնկարների, և այլ հրապարակումների թիվը:	-		
Աշակերտական խորհրդի կազմում ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվը	4	4	6
Սեռերի հավասարության գործակիցը՝ հաստատությունում սովորող տղաների թվի հարաբերությունը աղջիկների թվին	0,96	0,95	1,7
Աշակերտական խորհրդում սեռերի			1,5

հավասարության գործակիցը՝ խորհրդի անդամ աղջիկների թվի հարաբերությունը տղաների թվին			
Գերազանց առաջադիմությամբ տղաների թվի հարաբերությունը գերազանց առաջադիմությամբ աղջիկների թվին	0,8	0,7	1,0
Տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող տղաների թվի հարաբերությունը տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող աղջիկների թվին	-		
Տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունը աղջիկների տարեկան միջին բացակայությունների թվին (ժամերով)	-	-	2,1
«Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «քիմիա» և «Կենսաբանություն» առարկաներից տղաների և աղջիկների միջին առաջադիմությունը/տարեկան գնահատականները			
Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը (Հաշվարկ. հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին)	3	3	3
Աշակերտական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը	-		
Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների միջին տարեկան առաջադիմությունը/գնահատականները	-		
Անվճար դասագրքեր ստացող սովորողների թիվը և տոկոսը (Հաշվարկ. անվճար դասագրքեր ստացող սովորողների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին)	245/60%	244/40%	75/10%
Անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը (Հաշվարկ. անվճար սնունդ ստացող սովորողների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին)	228/70%	228/70%	54/57%
Հաստատության կողմից իրականացված ներառական կրթությանն առնչվող արտադասարանական միջոցառումների թիվը՝ ըստ դասարանների (գրույցներ, ֆիլմերի դիտում, քննարկումներ. կլոր-սեղաններ, սեմինարներ, էքսկուրսիաներ և այլն):	10	12	12

Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերի թիվը	4		
--	---	--	--

Մաս 5. Համայնքային մասնակցություն

«Ծնողները, ընտանիքները, մանկավարժները և համայնքները միասնաբար – սա է այն լավագույն համագործակցությունը, որը կարող է ապահովել, որ բոլոր աշակերտները ստանան անհրաժեշտ աջակցություն և ապահովված լինեն պահանջվող ռեսուրսներով՝ իրենց ուսման և կյանքի մեջ հաջողությունների հասնելու նպատակով:

Միջազգայնորեն տարանջատում են ծնողների, ընտանիքների, և համայնքների մասնակցության 6 ձև: Դրանք են՝

- ծնողական և ընտանեկան խնամքը, ուշադրությունը և հոգածությունը երեխայի հանդեպ.
- ծնողների, ընտանիքների և համայնքների մշտական հաղորդակցությունը (կապը) հաստատության հետ.
- ծնողների, ընտանիքների և համայնքների կամավորական բնույթի գործունեությունը՝ ուղղված հաստատությանն օժանդակելուն.
- աջակցությունը երեխային իր տնային աշխատանքների կատարման մեջ և սովորելու գործընթացում.
- ծնողների, ընտանիքների, և համայնքների ներգրավվածությունը ուսումնական հաստատության կողմից որոշումների կայացման գործընթացում.
- հաստատության համագործակցությունը տեղական իշխանությունների և համայնքների հետ:»

(NEA Education Policy and Practice Department (Center for Great Public Schools) 1201 16th St., NW, Washington, D.C. 20036)

Այսպիսով ծնողների, ընտանիքների և համայնքի մասնակցությունը համարվում է ուսումնական հաստատության գործունեության բարելավման կարևոր միջոց: Մասնակցության առաջնային և կարևորագույն ձևն է երեխայի հանդեպ խնամքը, ուշադրությունը և հոգածությունը ծնողների և ընտանիքի կողմից, ներառյալ՝ ուսումնական հաստատություն երեխայի կանոնավոր հաճախումն ապահովելը: Անհրաժեշտ է նաև ծնողների և ընտանիքների մշտական հաղորդակցությունը և կապը ուսումնական հաստատության հետ, ծնողական ժողովներին կանոնավոր մասնակցությունը՝ երեխայի բացակայությունների, առաջադիմության, հաջողությունների և խնդիրների վերաբերյալ տեղեկացված լինելու և նրան աջակցելու համար: Ծնողական և ընտանեկան մասնակցության տեսանկյունից շատ կարևոր է նաև երեխայի տնային հանձնարարությունների կատարումը վերահսկելը և անհրաժեշտության դեպքում նրան աջակցելը՝ նպաստելով երեխայի մոտ սովորելու նկատմամբ սիրո և հակումների առաջացմանը: Ծնողներն իրավունք ունեն հետևել երեխայի ուսումնառությանը ուսումնական հաստատությունում, մասնակցել դասալսումներին, սակայն մեր երկրում նրանց մասնակցության այս ձևը տարածված չէ և ծնողների մասնակցության աստիճանը երեխայի ուսումնառության գործընթացին հաստատությունում հիմնականում ցածր է:

Մասնակցության ամենատարածված ձևը Հայաստանում ծնողների, ընտանիքների, և համայնքների կամավորական բնույթի գործունեությունն է՝ հաստատությանն օժանդակելու և երեխաների համար միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Ընտանիքները, ծնողները և համայնքները հաստատությանն օժանդակում են կամավոր դրամական

ներդրումներով, աշխատանքով, գույքով կամ նյութերով, ինչպես նաև միջոցառումների կազմակերպմամբ և դրանց մասնակցությամբ:

Մասնակցության առավել բարձր մակարդակի հասնելու համար կարևոր նշանակություն ունի ծնողների և համայնքների ներգրավվածությունը ուսումնական հաստատության կողմից որոշումների կայացմանը, ինչը Հայաստանում ապահովվում է հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի, ինստիտուտի միջոցով: Խորհրդի կազմում ներառվում են հաստատության սովորողների ծնողները, մանկավարժները, տարածքային կառավարման մարմնի, նախարարության և տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչները: Խորհրդի լիազորություններն են՝

- հիմնադրի սահմանած կարգով տնօրեն ընտրելը.
- հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը հաստատելը.
- հոգաբարձուների խորհրդի կողմից ներկայացված նախահաշիվը, ինչպես նաև նպատակային ծրագրերը քննարկելը, որոնց քննարկումներին կարող է մասնակցել հոգաբարձուների խորհրդի լիազոր ներկայացուցիչը.
- գույքի օտարման և (կամ) ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների վերաբերյալ տնօրենի ներկայացրած առաջարկությունները լսելը և դրանց հավանություն տալը.
- հիմնադրի սահմանած կարգով հանրակրթական դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները և համամասնությունները սահմանելը:

Բացի այդ ուսումնական հաստատության կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդներ, առարկայական մեթոդական միավորումներ: Ուսումնական հաստատության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև այլ խորհրդակցական մարմիններ՝ հոգաբարձուների և այլ խորհուրդներ: Ուսումնական հաստատության կառավարմանը մասնակցում են ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Մասնակցության բարձրացման կարևոր գործոններից է հաստատության կողմից իրականացված քայլերը, որոնք ուղղված են հաստատության և տեղական ինքնակառավարման մարմինների/համայնքների հետ, ինչպես նաև զանազան համայնքային կառույցների հետ համագործակցության ամրապնդմանը: Ոչ միայն համայնքը պետք է ակտիվորեն մասնակցի հաստատության գործունեությանը, այլ նաև պետք է գործի հետադարձ կապը: Հաստատությունը գործունե մասնակցություն պետք է ունենա համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ այդ գործընթացում ներգրավելով նաև սովորողներին: Այն պետք է հանդիսանա տվյալ համայնքի կրթամշակութային կենտրոնը, լինի համայնքահեն:

Հաստատության գործունեության ներքին գնահատման գործընթացը պետք է բացահայտի, թե որքանով է արդյունավետ սովորող-ԻՄՁ/ընտանիք-հաստատություն-համայնք համագործակցությունը և որքանով է այն նպաստում կրթության որակի բարձրացմանը:

Ծնողների/ընտանիքների և համայնքի մասնակցությունը նկարագրող ցուցանիշներին և չափանիշներին հաստատության համապատասխանությունը գնահատելու ձևերը ներառում են ինչպես փաստաթղթային ուսումնասիրություն, փաստագրում և դիտարկում, այնպես էլ հարցում:

Ստորև բերվում են սովորողների և նրանց ծնողների մասնակցության վերաբերյալ ցուցանիշները:

Հաստատության մթնոլորտը նպաստում է սովորողների և տնօրինության համագործակցությանը: Տնօրինությունը խրախուսում է ակտիվ սովորողների մասնակցությունը հաստատության գործունեությանը, խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում է դրանց իրագործմանը.

1. Սովորողների մասնակցությունը իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ հաստատության ղեկավարության կողմից որոշումների կայացմանը, նման դեպքերի թիվը և մասնակցությունն ունեցած սովորողների տոկոսը.
2. սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և դրանց թիվը, նախաձեռնություններին մասնակցությունն ունեցած սովորողների տոկոսը.
3. սովորողների կողմից կազմակերպած միջոցառումները և դրանց թիվը, միջոցառումներին մասնակցությունն ունեցած սովորողների տոկոսը.
4. սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը, մասնակցությունն ունեցած սովորողների տոկոսը.
5. իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները, դրանց թիվը, և մասնակցությունն ունեցած սովորողների տոկոսը.
6. սովորող-սովորող և սովորող-ուսուցիչ հարաբերությունները հաստատությունում:

Հաստատությունում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները: Հաստատության աշակերտական խորհրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, աշակերտների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք.

7. Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն՝ ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն.
8. աշակերտական խորհրդի կողմից ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով.
9. աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած միջոցառումները, ներառյալ՝ կազմակերպված շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները; դրանց հաճախականությունը և մասնակից սովորողների տոկոսը.
10. աշակերտական խորհրդի գործունեության համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին:

Հաստատության ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է տնօրինության և աշակերտական խորհրդի հետ, նպաստում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին.

11. Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները, դրանց թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.
12. ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները՝ հանդեսները, հավաքները, երեկոյթները, էքսկուրսիաները, ճանաչողական այցերը և այլն ու դրանց թիվը; մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը

13. ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկները, դրանց թիվը.
14. ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը և դրանց ընթացքում քննարկված հարցերի շրջանակները.
15. ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողագուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողներին տրամադարվող աջակցությունը, ձևերը և աջակցություն ստացող սովորողների տոկոսը.
16. ծնողական և աշակերտական խորհրդների համագործակցությունը և դրանց ձևերը.
17. հաստատության առօրյաից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը.
18. ծնողների ներգրավվածությունը սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին, ներգրավվածության ձևերը և նման աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը.
19. ծնողների տոկոսը, որոնք օգտվում են <http://www.dasaran.am>, <http://ktak.am>, <http://www.armedu.am>, <http://forum.armedu.am/>, <http://lib.armedu.am>, և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության կայքից:

Հաստատությունը և համայնքը համագործակցում են և հաստատությունը վարում է ակտիվ հասարակական կյանք.

20. հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնականության բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցությունը, այդ ուղղությամբ կատարված ներդրումները.
21. համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողների տեղեկացվածությունը և նրանց մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը; մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.
22. հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված և անցկացված միջոցառումները և դրանց թիվը; մասնակից սովորողների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը.
23. հաստատության կողմից ՀՀ-ների հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը և մասնակից սովորողների թիվը՝ ըստ ծրագրերի:

Մաս 5-ում բերված 1-ից 5-րդ ցուցանիշներ համար անհրաժեշտ է կատարել տվյալների/տեղեկատվության հավաքագրում, փաստաթղթային ուսումնասիրություն կամ դիտարկում/փաստագրում, այնուհետ լրացնել ստորև աղյուսակ 28-ը:

Աղյուսակ 28. Տվյալներ հաստատության գործունեությանը սովորողների մասնակցության վերաբերյալ

Ցուցանիշ	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
Սովորողների մասնակցությամբ իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ ղեկավարության կողմից որոշումների կայացման	12	15	17

դեպքերի թիվը			
Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների թիվը.	15	20	22
Սովորողների կողմից կազմակերպած միջոցառումների թիվը	15	18	17
Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովների, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը	40	35	35
Սովորողների մասնակցությամբ իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ հաստատության ղեկավարության կողմից կայացրած որոշումները և դրանց կայացմանը մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.			

Աղյուսակ 30. Տվյալներ հաստատության ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի
Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.	10	8	8
Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկոյթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների.և այլնի թիվը	50	45	47
Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը.	5	4	6
Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը ուստարվա ընթացքում	10	12	16
Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողագուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում	32	30	30
Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը.	47	40	42
Ծնողների տոկոսը, որոնք օգտվում են emis.am , http://ktak.am , http://www.armedu.am , http://forum.armedu.am/ , http://lib.armedu.am , և այլ կրթական կայքերից, ինչպես նաև	90	90	91

հաստատության կայքից			
---------------------	--	--	--

«ԳՅՈՒՄՐՈՒ N 29 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2021-2022 ուստարի